

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Գ Ա Խ Ա Ռ Ա Կ Ա Ն

Լ Ր Ա Գ Ի Ր

Ամեն ԵՐԵՎԱՆԻ օրերը կը հրատարակուի: Պոստը համար 50 բուռն գինն է 2 արծար Մեծիտ կանխիկ. բոլորատարուքեան ծախքը բաժանորդաց վրայ. իսկ գաւառաց համար 2 1/2 արծար Մեծիտ: Ծանուցման տողը 2 գրչ:

Գաւառաց բոլորատարի ծախքը բաժանորդաց չ'վերաբերիր: Լրագրոյ վերաբերեալ որ է կ գրուի և ուղղելի առ Տնօրէն-տնօրէնացի Մ. Յ. Մեխիթեան ի կ. Պոլսի Զիւմպիլի խան վերնա-յարկ քի. 10:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ազգամարայ կաթողիկոս Ամեն. Տ. Խաչատուր սրբազան յառաջիկայ երկուշաբթի օր Ազգամար իւր աթոռը կուղևորի:

Այս առթիւ պէտք է քանի մը խօսք ընենք:

8-10 տարիէ ի վեր Ազգամարայ Աթոռը և իւր ընդարձակ վիճակը մեծամեծ վնասներու և աղէտներու հանդիպեցաւ, մինչև իսկ վանքը թափուր և աւերակ մնաց զայն խնամող արժանաւոր ձեռքերու պակասութենէն:

Արդ խաչատուր Սրբազան Ազգամարայ Աթոռը կը վերադառնայ հետք տանելով շատերուն յոյսն ու ակնկալութիւնը թէ Ն. Սրբազանութիւնը աւերակ դարձած վանքը շէնցընելու, բարոյապէս և նիւթապէս զարգացնելու, օրինաւոր և բարեկարգ վարժարաններ բանալու և վիճակայնոց կրած բաղձադիմի հարստահարութիւնը բառնալու և անոնց բարեկեցութիւնը ապահովելու համար ամէն ջանք և աշխատութիւն պիտի ընէ, ինչպէս կը պահանջեն իր ազգային և եկեղեցական պարտաւորութիւնը:

Այս ակնկալութեանց մէջ բաժին մ'աւ ունիմք. բայց որպէսզի ճշմարտութիւնը խօսած ըլլամք, այժմէն կրնամք յայտարարել Ամեն. Խաչատուր սրբազանի թէ այս ակնկալութիւնը իրագործելու և գործնականապէս արդիւնաւորելու համար մեծ պարտաւորութիւններ և զոհողութիւններ ունի ընելիք, ինչպէս ինքն ալ քաջ իսկ դիտէ. ուստի կը փափաքիմք որ մեր ամենուս ունեցած ակնկալութիւնը պսակելու դիրքին մէջ գտնուի միշտ, անչափահասիցի, երկրին բարեկալութեանը և եկեղեցւոյ օրինաց անվթար պահպանութեան սիրող մնալով և աչքին առջև ունենալով կիլիկիոյ արդի կաթողիկոսին տխուր և ցաւալի վիճակը որ իւր թեմականաց քաղաքական և հոգևոր պարտքերը կատարելու մասին անվոյթ և անբաւական գտնուելով, ազգային ժողովոց և հասարակութեան մեղադրանայն արժանացաւ:

Ասով ըսել չեմք ուզել թէ Խաչատուր կաթողիկոս կիլիկիոյ կաթողիկոսին նման անվոյթ գտնուելու գիտաւորութիւնը ունի. ո՛չ, այդպիսի կասկած մը մտքերնուս անգամ չանցնիր, վասն զի նորա աստի տարադրութեան վարած տաս-

նամեայ կեանքը ապացոյց մ'է մեղահաւատալու թէ Պոստը մէջ իւր վիճակայինները խնամող այսպիսի պաշտօնեայ մը աւելի մեծ եռանդեամբ կաշխատի, երբ իւր ժողովրդեան ծոցը վերադառնայ:

Մենք ուրախ եմք որ Ազգամարայ կաթողիկոսական յարաբերութիւնը ընդ ամենայն Հայոց Հայրապետութեան և Կեդր. վարչութեան ճշդութեան և ներդաշնակութիւն կապեցին. երանի՜ թէ Սոց կաթողիկոսութիւնն ալ մի և նոյն յարաբերութեանց մէջ հաստատուէր, հը պատակելով Մայր Աթոռոյ իրաւասութեան և Կեդր. վարչութեան որոշմանց:

Այս զգացմամբ և համոզմամբ բարեյալող ճամբորդութիւն կը մտքութեմք ամեն. Տ. Խաչատուր Սրբազանի:

Ազգային ժողովը թէև ուրբաթ օր նիստ ըրաւ և թաղային մատակարարութեան յօդուածին վրայ վիճաբանութիւնը շարունակուեցաւ, սակայն երեսփոխանաց մեծագոյն մասը, ինչպէս նաև Ս. Պատրիարքը և Գաղ. ժողովոյ անդամները առանձին նիստ ունենալու առթիւ, բացակայ գտնուելով, ժամը 9 1/2 ին ատենը գոցուեցաւ յաջորդ նիստը 13 օրէն ընելու որոշմամբ:

Ուրբաթ օր Գաղ. ժողովը Ազգ. Պատրիարքարանի դրամական անձկութիւնը խորհրդածութեան նիւթ ընելով, Տնտ. խորհրդոյ և Ելև մտից Հոգաբարձութեան կողմանէ ներկայացուած առաջարկութիւնը որ Պատրիարքարանի պաշտօնէից ամսականները զեղչել կը տրամադրէր, Ս. Պատրիարք Հօր յայտարարութեամբ մերժեց և անկարելի պաշտօնեայները ճամբել որոշեց:

Նախորդ յօդուածով մը արդէն մենք առաջարկած էինք այս տնօրէնութիւնը. դո՛հ եմք որ Ազգ. վարչութիւնը սոյն օրինաւոր առաջարկութիւնը ուշադրութեան առաւ և վերջապէս նոյնին գործադրութիւնը որոշեց, բայց որպէս զի այս մասին անտեղութիւնը չը ծագին և արժանաւորացյալուն ու կարևորութիւնը վտանգի ենթարկելով, Ազգ. վարչութիւնը բարոյապէս չը վնասուի, կը փափաքիմք որ սոյն որոշման գործադրութիւնը արդարութեան և արժանեաց վրայ հիմնուելով կատարուի, առանց այս կամ այն պաշտօնէին թեկն ածելու ընդդէմ օրինաց և արդարութեան:

Նոյնպէս Գաղ. ժողովը Ս. Պատրիարք Հօր պաշտօնական այցելութեանց ծախուց համար 300 ոսկի փոխառութիւն մ'ընել որոշեց և այս մասին գիր գրեց Տնտ. խորհրդոյ:

Համագումար ժողովը չորեքշաբթի օր նիստ ըրաւ ի Պատրիարքարան և Ս. Պատրիարք Հօր առաջարկութեամբ հետևեալ անձերէ գիւտն կազմեց, որոյ պաշտօնավարութիւնը պիտի տեսէ մինչև յառաջիկայ մայիս 1:

Տ. Մատթէոս Եպիսկ. ատենապետ
Տ. Սահակ քհ. ատենադպիր
Յետոյ ատենական կանոնադրութիւն մը խմբագրելու համար մասնաժողով մը կազմուեցաւ, որոյ անդամք են

Տ. Մատթէոս Եպիսկ. Իղմիրեան
Տ. Խորէն վարդ. Մխիթարեան
Տ. Պողոս վարդ. Խօյտամեան
Տ. Եղնիկ վարդ. Ապահունի
Տ. Արիստակէս քհ. Մամբրեան

Համագումար ժողովը 13 օրէն, այսինքն հոկտ. 13 հինգշաբթի օր կըրկին պիտի գումարի խնդրոց կարգուենալով

1. Ֆիլէնկիսի պաշիի ամուսնական խնդիրը.
2. Ատենական կանոնադրութիւն: Ֆիլէնկիսի պաշիի ամուսնական խնդիրը արդէն ծանօթ է հասարակութեան:

Սա (փեսայն) անցեալ տարի Օրթագիւղ աղջկանը տանը մէջ Պասկի խորհուրդը կատարուեցին երկու ժամ վերջը, ինչ ինչ գիտողութիւն ընելով ամուսնութիւնը մերժեց և մեկնեցաւ: Խնդիրը նախորդ կրօնական ժողովոյ ատենանք ելնելով, ժողովը կրկին ամուսնանալու համար թոյլտուութիւն ըրաւ փեսային. սակայն լրացուած նայելով այդ որոշման արձանագրութիւնը մինչև ցարդ կրօնական ժողովոյ կողմանէ վաւերացուած չէ եղեր: Ալ չեմք գիտեր թէ կրօնական ժողովը այսպիսի որոշում մը տալէ վերջը, ինչո՞ւ մինչև ցարդ արձանագրութիւնը չէ վաւերացուցած:

Սոյն խնդրոյն վրայ հարկ եղած բացատրութիւնը տալու համար նախորդ կրօնական ժողովոյ անդամները Համագումար ժողովին ներկայանալու հրաւէր ընդունած են:

Յաւօք սրտի իմացանք որ Պատ. փոխանորդ գեր. Տ. Յովհաննէս քահանայ Մկրեան կրօնական ժողովոյ անդամակցութեան հրաժարական տուեր է, չգիտցուի ինչ

պատճառաւ: Եւ թէև կրօնական ժողովոյ անդամակցի Հարք աղջկեր և թախանձեր են որ հրաժարականը ետ առնու, սակայն նա անդրդուելի մնացեր է:

Ազգային խմբագրութիւնը քաջալերել հասարակաց պարտք է:

Վերջին ատեններս Նորագիր զանազան հարուածոց հանդիպեցաւ և թէև մերթ բացուեցաւ, մերթ գոցուեցաւ, սակայն երթալով հասարակութեան մէջ հաստատուն և տեւական դիրք մը, համակրութիւն մը ստացաւ:

Գիտեն անշուշտ ընթերցողք թէ սա այս անգամ հարստահարութեանց խնդրոյն զո՛հ զնաց, զո՛հ մը որ կարծեմք շատերու ցաւ և կսկիծ պատճառեց:

Ուստի այսպիսի թերթ մը քաջալերելու համար սոյն վերջին օրերը պատմական մեծ նշանակութեան մը արժանի են, և որք հայրենասիրական զգացումէ ներշնչեալ պատուական յօդուածոց բովանդակութիւն մ'էր, հանգանակութիւն մը բացուած է հասարակութեան մէջ:

Այն որ սիրող է ազգային լրագրութեան, մանաւանդ երբ այս վերջինը կարողութեան վեր զոհողութիւններ կընէ, պէտք է որ սոյն հանգանակութեան մասնակցի. որով ոչ միայն զնորագիր, այլ և Հայկական մամուլն ընդ նմին պատուած և քաջալերած կըլլայ:

Հետևեալ բարբարոսական անցից վրայ որք Տրապիզոնէն գրուած են մեզ, Տրապիզոնի վսեմ. կուսակալին արդարասիրութիւնը և ուշադրութիւնը կը հրաւիրեմք:

« Ամիսէ մը աւելի է որ գիւղերը տուրք ժողովելու համար հարկւրպետ մը գնաց. ատիկայ շատ մը գիւղացիներ անխղճաբար գանակածելով, հայհոյեցելով, սինին կապելով տանջեց. եթէ տունը ստակինն պատրաստ ըլլալով, երթամ բերեմ ըսող ըլլար, թող չէր տար. վերջապէս կարգը եկաւ գիւղին մէջ պատուաւոր Յակոբեան Սարգիս աղային. հարկւրպետը զայն սինին կապեց, արեւին կողմը դարձուց, սկսաւ լըրան ջուր լեցնել տալ և ըսել. « Կեաւ վո՛ւր, հանիւտ քեզիս բարասը. » վերջապէս խեղճը կերպիւ իւր քաջատեղով, քաղաք դիմեց, աղբրաս գիր տուաւ և զայն գիւղէն հանել տուաւ. բայց նորա տեղ մի ուրիշը խրկուեցաւ, այսինքն հազարապետը սա աւելի անգութ ըլլալով, ոչ աղ-

քատութեան և ոչ թշուառութեան
ինչ ըլլալը չգիտնալով, ամէն կողմ
Տէրութեան օրինաց հակառակ աշ-
քատաց արիւն լացնել տուաւ . մէկ
կով ունեցող աղքատը որով իւր որ-
դեքը կամ որքերը պիտի նայէր,
քան որդէ գնով ծախել տուաւ : Երէկ
ալ Շանայ գիւղին Տ. Սարգիս քա-
հանան աղքատ գիւղացւոյ մը ե-
րաշխաւոր եղած ըլլալով և վճարու-
մը այլ և այլ առիթով կէս ժամ վեր-
ջը մնալով, քահանան բռնել տուե-
ր, լաւ մը ձեռնէ վերջը սինի մը կա-
պեր և վրան ջուր լեցնել տուեր է,
այնպէս որ սոյն անգլխովը մըզ-
կիւթին առջեւ կատարուելով, մըզ-
կիւթին իմամբ եկեր ազատեր է խեղճ
քահանան :

« Այսօր աղբրաւորի պիտի տըր-
ուի տեղըոյս քաղ. ժողովին . տես-
նե՛րք ի՞նչ վախճան պիտի ունենայ » :

**Բաղէչէն մեզ խրկուած հետեւեալ
հանրագիրը Ազգ. վարչութեան ու-
շադրութեանը կը ներկայացնեմք :**

... Խմբագիր

Քաղաքս բաւական ատենէ ի վեր ա-
ռանց առաջնորդի մնալով, հուսկ ուրեք
Պատրիարքարան Պետրոս վարդապետ Սղեբ-
ղի նախկին առաջնորդը իր քննիչ և փոխ-
Առաջնորդ տեղս զրկեց . որ երկու ամիսէ
'ի վեր է պաշտօնի զլուս անցած, բայց ոչ
մի ազգային խնդիր կրցած է լուծել : Պետ-
րոս Վ. հանրածանօթ է միայն իւր քրդա-
վարժ բարբառով . և երբէք չկրնար այն-
պիսին հմտութիւն ունենալ տաճկական
նուր օրինաց և ընդարձակ լեզուին և ու-
նոյն . այս գիրութիւն մ'է առաջնորդի մը
որ քաղաքական պաշտօններու մէջ մուտ և ել
և դատարաններու մէջ աթոռ ունի : Բայց
եթէ միայն այս թերութիւն լինելու թերեւս
արդարանար, դժուարին և բոլոր ժողո-
վրդեան ցան սոս է, որ յիշեալ փոխ Ա-
ռաջնորդ Սալմաստուկեան Աւետիսի հետ հա-
մակամ կ'գործէ 'ի զնա հարստահարեալ
թշուառ ժողովրդեան :

Պատրիարքարանէն քանիցս անգամ ա-
ռաջնորդական ցանկ մը ուղղեցինք . տակա-
նին չզրկեց . յուսալով թէ յիշեալ փոխ Ա-
պիտի կոնայ հովուի և որ մ'իւրեւ Առաջ-
նորդ ընդունուի : Մենք կ'սիրեմք յիշեալ
վարդապետը իւր վարուց և սրբակեցու-
թեան համար . բայց չենք կրնար իբրև Ա-
ռաջնորդ ընդունիլ, ոչ այժմ և ոչ յախտ-
եան . թող նա քաղաքիս վան քերէն մի-
ոյն վանահայր կարգուի, ամենայն սիրով
կրնաւորիմք, բայց ազգի մը, օգնու-
թեան կարօտ ժողովրդեան մը ղեկը
այսպիսի տգէտ և անհմուտ անձի մը հա-
ւատալ յիմարութիւն և տղայամտութիւն
է : Սոյն տողերը Ս. Պատրիարքի և Ազգ.
Վարչութեան ուշադրութեան կ'յանձնեմք :
Հաճեցէք . . . Տէր, նամակիս ան-
կիւն մը չորհել Ձեր պատուական թեր-
թերուն մէջ որ հանուր հասարակութեան
բողոք և խնդիրն է :

Բաղմամիւ ստորագրութիւնը
Բաղէչ 8 սեպտ. 1876

**Հետեւեալը Բիւնկեանի մէջ վերջին
օրերս պատահած հարստահարու-
թեանց մանրամասն նկարագրու-
թիւնն է, որուն մէջ յայտնի կը տես-
նուին վարդա և անօրէն Բրթաց
խժգժութիւնքը և ասպատակու-
թիւնքը :**

... Խմբագիր .

Ակնայ և Տիւրիկոյ սահմաններու
եղբրքը իջեցը անուն լեռ մը կայ
որուն տիրացած է Բենկացին իւրա-
նելով և հէօծէթով և ուսկէց դա-
րերէ հետէ փայտ կը կտրէ : Այս լե-
րան ստորտը 13 տարիէ ի վեր Ա-
դուշադցի անուն քիւրտ ցեղէ քանի

մը արեւարբու աւաղակներ իրենց
գոմեր շինած են, ուր կը քաշուին
ձմեռները երբ վրանները բնակիչն
անկարելի կըլլայ : Ժամանակ մը ա-
տոնք չըլլալայ քիւրտ ցեղի մը հետ
թշնամանալով և իրարմէ մի քանի
անձինք սպաննելով հեռացան ութ-
տարիի չափ և երբ հաշտուելով վեր-
քարարձան կառավարութիւնը այդ-
լեւան ստորտն եղած քանի մը ար-
տավար հոգերը որ սահմանադրու-
է Տիւրիկոյ և Բենկայէն մի ժամ կը
տեւէ, երկու անգամ է աճուրդի կը
դնէ իբրև տէրութեան սեպհակա-
նութիւն յատուկ պաշտօնակալներու
միջոցաւ և Բենկայցին մինչև 13000
զրուի չափ կը բարձրացունէ անոր ար-
ժէքը : Բենկացւոյն այս ընթացքը
որ տէրութեան դանձուցն և միան-
գամայն ժողովրդեան օգտակար էր
ոչ միայն շահու գործիք մը դար-
ձած է եղեր Ակնայ կառավարական
ժողովոյ մէկ երկու անգամոց որք
այս քիւրտերէ կաշառուած անյայտ
ըրին երկու անգամ է այդ աճուրդը
(ինչպէս վերջերս Խարբերդի միւթա-
սարքեֆին տրուած աղերսագրէն ալ
յայտնուեցաւ) այլ և անոր հետե-
ւանքը խիստ աղէտալի եղաւ Բեն-
կացւոյն և դառնապէս զղջաց տէ-
րութեան դանձուցն օգտակար և
զինքն ալ անով ապահովել ուղած
ըլլաւուն այդ քիւրտերէն . զի ասով
վառեց դրդեաց անոնց ցատու՛մը որք
կատարած սկսան բուռն զօրութեամբ
և հրացանի հարուածներով հալածել
Բենկացի փայտահարները այդ լեռ-
ներէն : Երբ չըրս անգամ գրաւոր
բողոքներ եղան ասոր համար Ակնայ
կառավարութեան և տեսնելով որ
անլսելի կը մնան՝ Տիւրիկոյ կառավա-
րութեան հասուցին իրենց բողոքե-
րը, և սա երբ ի դատարանութիւն հը-
րաւիտեց այդ վայրենի Ադուշադցի-
ները՝ ըմբոստացան յայտնապէս ը-
սելով որ իրենք Ակնայ կառավարու-
թեան իրաւասութեան տակ կը գր-
նուին և կատարութիւննին կրկնա-
պատկեցին : Հինդ հատ Ադուշադցի
եկան դաղտագողի գիշերանց ժամը
հինգին միջոցները և գիւղի ծայրը
եփրատայ եղբրքը քանի մը անգէն
անձանց պատահելով որք իրենց այ-
գիներ կերթային՝ հրացաններ պար-
սեցին վրանին և ասոնցմէ մին ին-
կաւ մեռաւ գնտակէ մը :

Բենկացին բողոքեց և սաստիկա-
պէս բողոքեց Տիւրիկոյ կառավա-
րութեան և այն որ այս տողերը կը
դրէ, այդ բողոքարկու ժողովրդեան
դատու մէջ գտնուեցաւ, բայց կու-
ռավարութիւնը իր սահմանէն դուրս
չարագործ բռնելը օրինաց հակա-
ռակ նկատելով՝ եղելութիւնը Սե-
բաստիոյ կուսակալին ծանայց և յա-
տուկ պաշտօնատար մը ոստիկանե-
րով խրկեց և ազդարարեց Ակնայ
կառավարութեան որ միանալով իր
հրամանատարի հետ երթան բռնեն
այդ եղեռնագործ Ադուշադցիները .
սակայն Ակնայ կառավարութիւնը
երբէք չարթեցաւ տեղէն, ոչ ոստի-
կան խրկեց և ոչ ալ պատասխան մը .
վարուեցաւ կառավարութեան հետ
ալ այնպէս՝ ինչպէս վարուած էր
մինչև հիմայ Բենկացւոյն հետ և
գործն այս աստիճանի բերած հա-
սուցած էր : Ակնայ կառավարու-
թեան այս ընթացքէն աւելի հա-
մարձակութիւն գտնալով Ադուշադ-

ցիները սկսան աւելի համարձակ դոր-
ծել . գիշեր ցերեկ խումբ եղած կը
չըլին Բենկայի դաշտերու և լեռնե-
րու մէջ և ճանապարհները կը պա-
հեն . համոզուած ըլլալով Բենկացին
որ իրեն կենաց կը դարանի Ադու-
շադցին՝ սարսափած է և ոչ ոք կը
համարձակի տան դուռներէն դուրս
ելլալու . թողած է այդեղործն իր
պարտեզը, վաճառականն իր երթե-
ւեկութիւնը և երկրագործն իր վար-
ու ցանը, և ինն անաստներ դար-
ձած են Բենկայի ընդարձակ դաշ-
տերը՝ ուր երբեմն երկրագործին
խօսին ու բրկչը կը հնչէին և եթէ
այս վիճակն երկարի, տարակոյս չկայ
որ ամեն ոք պիտի թողու իր տունը,
այգին, արտը, հայրենի գերեզմանը
և պիտի ցրուի, զի այս Ադուշադցի-
ները այն աստիճան կատարած են մինչ
երկու օր առաջ ժամը չորսին մի-
ջոցները գիւղի ծայրը եկան և հովի-
ւի և ուրիշ անձի մը վրայ հրացան
պարպելով սպաննել ուղեցին այն
միջոցին երբ հրամանատարն իր ոս-
տիկաններով նստած էր գիւղը,
բայց ասոնք ալ տեսնելով որ բան
մը չեն կրնար ըսել եւան դացին և
հիմակ ժողովուրդն յուսահատութեան
մէջ է : Ստուգեցին մեզ քանի մը
Ձալթը գիւղացի որ այս հրամանա-
տարն իր ոստիկաններով այդ գիւ-
ղին անցած միջոցին հոն պաշար-
ուած մնացած է խումբ մը զինեալ
Ադուշադցիներէ և մաղապուր փա-
խած :

Բենկացւոյն արդի վիճակն ու կա-
ցութիւնը խիստ ցաւալի է, ժողո-
վուրդ մը որ սարսափ տուած էր
աւարառու քրդին և երկրագործ և
անցաւոր ապահով էր իր սահմանե-
րու մէջ՝ հիմակ ինքնին սարսափած
է քանի մը խուժաղուժ քիւրտերէ
որոնք Տիւրիկոյ կառավարութեան
աջակութեան ազատ մտաւրով համար
երկու կառավարութեան սահմանա-
գրուի մէջ մեծ ճամբուն վրայ քա-
նի մը գոմը շինած և Ակնայ կառա-
վարութեան տակ ենք ըսելով ժա-
մանակէ մը հետէ շատ մը ժողու-
թիւններ և աւարառութիւններ ը-
րին մեր շրջակայ գիւղերէն և ան-
պատիժ մնացին : Ակնայ կառավա-
րութեան բողոքերը զանազան դժ-
ուարութիւնները մանաւանդ երբ կը
տեսնան որ երբեմն ալ պաշտպանու-
թիւն կը գտնան, ասկէց աւելի քաջա-
լեւրուած են այս արիւնկղակ աւազակ-
ները : Օրինակի համար Խարաճայի
տղայ ըսուած Ադուշադցի քիւրտ մը
երկու ամիս առաջ Սինանցի մը կըս-
պանէ և թէ և կը ձերբակալուի Ակ-
նայ կառավարութեան և կը բանտար-
կուի ամիս մը, բայց ինչպէս է նէ
Խարբերդ խրկուած միջոցին կը փա-
խի : Շատ են և բաղմամիւ սոյս
ցեղի արարքները և եթէ մնան Ակ-
նայ կառավարութեան իրաւասու-
թեան տակ այս դոմերուն մէջ՝ Բեն-
կացին յախտեան հանգիստ ճաշա-
կելիք չունի և ամեն ինչքերնին վե-
տանդի մէջ է :

... * * *
Ժողովուրդ մը որ քիւրտի չափ
կրնայ զէնք գործածել, այսպէս ա-
հաբեկ պաշարուած է հիմա և ինչ
ընելիքը չգիտէր, վասն զի երկրա-
գործի վիճակն և իր ընտանեաց հաց
ճարելու զանազան զբաղմանց պա-
րագաներ չեն ներեր թողու իր բան
գործը և միայն անձին պաշտպանու-

թեան հսկել . բայց քիւրտը՝ որոյ ար-
հետը աւաղակութիւն է, այս ար-
դեքները և մտածումները չունի .
որոտք մըն է սա որ ընկերակցու-
թեամբ կը գործէ և իր որսը կամ
անոր արածելու վայրին և կամ բոյնին
մէջ բռնելու յարմար ատենին կսպա-
սէ : Բայց ասկէց քիւրտը՝ որ կառա-
վարութեան օրէնքներէն խիստ տար-
բեր օրէնքներ ունի, աւելի կը քա-
ջալերի գործելու . եթէ քիւրտ մը
մնասելու ըլլաս՝ թշնամի կըլլայ ամ
բողջ այն աշրէթի այսինքն այն ցեղի
որու կը վերաբերի այդ քիւրտը և
այն ատեն բոլոր ցեղը կսկսի գոր-
ծել ոչ միայն ի վրաս նոյն անձին՝ այլ
նոյն հասարակութեան ամբողջ ան-
դամներու որու կը վերաբերի այն
անձը և ահա ասոր համար Ադուշադ-
ցին սպաննեց տղայ մը որ 17 տարե-
կան էր և որուն միակ յանցանքը Բեն-
կացի ըլլալն էր : Բայց ասոր հակա-
ռակ կառավարութեան օրէնքը որ
արդարութեան վրայ հիմնուած է՝
կը պատժէ միայն այն մարդիկը՝ ո-
րոնք մեղապարտ են և որոյ յանցան-
քը կամ ոճիրը ըստ օրինի ապացու-
ցեալ է :

Յանցաւորը բռնել տալու և զայն
ապացուցանելու համար ի հաշիւ առ-
նելով երկրագործն ժամանակի կո-
րուստը, քիւրտի փախուստը, ապար-
դիւն մնացած բողոքը և յանցանք
ապացուցանելու և այլ բաղմամիւ
դժուարութիւններ, շատ հեղաւելի
օգտակար կը համարի լուել որով չա-
րագործը կը քաջալերի և երկրագոր-
ծը ենթակայ կը մնայ աւարառու-
թեանց և հալածանաց :

Բայց Բենկացին ինչ և ալ ըլլայ իր
բողոքներու հետեւութիւնը, երբէք
չպիտի լուէ մինչև որ կառավարու-
թիւնը որ հայրաբար կը խնամէ իր
ժողովուրդ և երկրագործական զար-
գացման հոգ ունի, փութայ բռնել
ու պատժել չարագործները յօրինակ
և ի խրատ այն ամեն քիւրտ ցեղե-
րու՝ որով լիք են Բենկայի սահման-
ները : * * *

Բենկա 12 Սեպտ. 1876

... Էֆէնտի

76. 30 օգոստոսին հրաժարելով պաշ-
տօնէս՝ մեկնեցայ Տիւրիկէն . բայց պարտք
մը կայ առջևս, զոր չեմ կրնար զլանալ
առանց խրճատանը ըլլալուն, այն է գու-
հունակութիւնս յայտնել իրատոյցի այն
ամեն ազգայնոց, որք՝ Հարիոցին յառաջ-
դիմութեան համար անիյոթ չմնացին, մա-
նաւանդ Արթ. Տ. Սարգիս Ս. Հօր . նաև
Տ. Միքայէլ Հօր, որք տիւ և գիշեր զբա-
րոցին համար ամեն զհողութիւն չխնա-
յելով, յօժարութեամբ մատուցին . շնոր-
հակաւեմ տարակոյս չունիմ որ յիշեալ Արթ.
Հօրք և զպրոցատէր Աղգայիքը պիտի աշ-
խատին գէթ ըստ առաջնայն զպրոցին ան-
խափան շարունակութեան հոգ տանի, որ
կ'կառավարուի այսօր Պ. Արամ Փափագ-
եանի՝ առաջին և յառաջագէմ սանիս ձեռքը :

Ընդունեցէ՛ք յարգանքս .
Հրթ. դաստուր Տ. Կրասունցի գիւ-
ղին յետ 33 ամսեայ աշխատութեան :
1876 2 հոկտ. Տիւրիկէն ՓԱՓԱՁԵԱՆ

Ի. Պօլիս
Յիշեալ դաստուրն Տիւրբան Էֆ-
Տիւրիկի մէջ անձնուիրարար և հա-
ւատարմարար պաշտօն վարելուն հա-
մար խել մը վկայագրեր ունի ի ձե-
ռին, որոց երկուքը արժան կհամա-
ըլմը հրատարակել :

... * * *
Նիկոպօլեցի Փափագեան Տիւրբան պա-
տուելին որ 33 ամիս տեղս դաստարաւս

կային դասատուութեան պաշտօնը կը վա-
րէ, գոհ և չնորհակալ ըրած է զմեզ իր
անխնայ աշխատասիրութեամբը, անբասիր
վարուքը և անձնուէր ազգասիրութեամբը .
զայս ի խղճէ վկայել և մեր վերջին արտա-
զայս մեծարանքը անոր մատուցանել հարկ
եղած է մեզ :

Խ. ՄԻՔԱՅԷԼ Խ. ՍԱՐԳԻՍ
ՔԷՆԱՅ ԻՇԽԱՆԵԱՆ ՔԷՆԱՅ ԵՐԵՅԵԱՆ
Սորաբ. Հոգաբարձութեան և հասա-
ակութեան .

* *

Փոքր այս դպրոցի տամ մակերը չընաղ
Որ ուսումնասէր մանկանց է մակաղ
Ում այցելութեան ելի անյայաղ
Նրէ յիկնց արիւնջն ՚ի մուտա հասի վաղ :
Ո՞րք ինձ նման, է տէր զգացման
Արի է հայ մանուկ զարդիւք սուրբ ուս-
ման

Մերով մուտ գործէ յայս քաղցր բուրաս-
տան
Եօթն և տասն ամսոյ տեսցէ անխոնջ
լան :

Այցելու տրուայ Հայաստան վայրաց՝
Նորին տաճարաց ահեղ բեմքասաց
Շատ գաւառս տեսի խոպան, շատ ման-
կանց

Աստ սիրովեաց, աստ սիրտ իմ ցնծաց :
Նրէ իմ հարցուածոց ճարտար պատաս-
խան

Տայր զուարթագոյ մանկտին Հայկական
Նիկոսիոյս (էֆէսոսի) Տիգրան
Օրհնեցի ընդ սատարս ասքանազայ տան :
Սա բանիւ միայն չի տեսի աղգասէր
Այլ գործով սրտիւ ներհուն ուսման տէր
Դեռ ծաղիկ հասակ դեռ ամբ մատաղեր
Հոտ մանուկի զինքիւնիկ ըրէրէր :

Վիշտս ճանապարհի մոռացայ իսպառ
Վարծի՛ն և վարժեալսն օրհնեալ վար-
դապառ

՚ի յանրն քարանցս պտուղ բարբիառ
Վայելեալ ելի յուղին կանուլ դառն :
Գնամ արդ աստի թողում զայս կտակ
Այցելուաց սորին, սուրբ բան յորդրակ
Այր իւրաքանչիւր բան, գործ, օժան-
դակ,

Տայէ վարժեւոց վարչին գեղաքանդակ :
Արամ սիրտուն ինդրանօք քոյին
Տողագրապատիկ մատուցք Նշխչէին
Ընկալ յիշատակս, պահեա՛ ընդ ամեն
Գեղ և ընկերացդ մաղթեմ միշտ բարին :
Գնամ հայրենիքս՝ Հայաստան ես արդ
Ուստի եկիք աստ փթթեցայք իրբ վարդ
Հոտ անդոյ լիոյ հոտ Ձեր գեղազարդ
Թող չնչէ մտից արիւնջն յեկոյ զբարստ :
Աղօթարար և ցանկացող
Յառաջադիմութեան Ձերոյ
ԵՂԻՇԷ՛՛ ԱՍՐԳԱՊԵՏ
Տ. Մարգարեանց Վանայէ

Հետեւեալը անկողնականութեամբ
կը հրատարակեմք, նամակագրին
գաղափարակից չըլլալն յայտնելով

ՓՈՒՆՁ ԵՒ ԵՐՉՆԻԱՅ

Այս շարաթ աւուր փունջի մէջ Ե-
րիզայէն գրուած նամակի մը քաղ-
ուածէն կը տեղեկանամք թէ՛ Առաջ-
նորդական տեղապահը հոն համե-
լով սիրով ընդունուեր է . կը հաւա-
տամք ասոր . և կը մաղթեմք որ ի-
րենց այս սէրը տեղական ըլլայ . . .
Նամակագիրը սպառնալիքի նման
բան մը ըրած էր, այսինքն՝ քաղա-
քին խաղաղութիւնը չի վրդովելու
համար պէտք է եղեր որ Պատրիար-
քարանի վերջին տուած վճիռն ետ
առնուի, ու ժողովներն վերահաս-
տատուին իրենց պաշտօնին մէջ :

Աղէկ զոհողութիւն . Օրէնքն ան-
գամ խնայողները մեկ քանի տղա-
յամիտ և մէկ քանի ալ ՚ի բարոյա-
կանս արատաւորեալ ժողովականաց :
Արդարեւ զարմանալի է տեսնել խըմ-
բագիր մը որ համայն ազգին պատինն
համարուող Պատրիարքարանի մը բնա-
օրինի տուած որոշումն օտարի տակ
առնել տալու համարձակող գրիչնե-

րըն կը հիւրնկալէ իր թերթին մէջ .
Փունջ, որ օրինազանցները հար-
ուածելու պաշտօնն ունի, չգիտեմ
թէ այս տեսակ նամակի մը ապօրինի
և գրգռիչ խօսքերը իր թերթին մէջ
դնելու ինչպէս կը համարձակի . մի-
թէ նոր խնդիր մ'ալ յարուցանել
կուզէ . ինչու չձգեր որ դացող տե-
ղապահը պատրիարքարանի կողմնէ
իրեն եղած յանձնարարութիւններն
ի գործ ածէ խաղաղութեամբ . ինչ
կը յուսան խոռովութիւններէ, կռու-
ներէ և այն ալ այս տեսակ վիավուկ
ժամանակներու մէջ :

Աղգասէր, օրինասէր խմբագիր
մը պէտք է որ իր թերթով յորդոր
կարդայ ժողովուրդին, որ Պատրի-
արքարանի հրամաններուն գլուխ
ծռելով բոլոր Աղբիւն կեդրոնը հա-
մարուող Պոլսոյ Պատրիարքարանը
պատկառելի ընեն, գոնէ օտարին
առջև .

Մինչև ցարդ հայրենակցացս մէջ
եղած բոլոր խռովութեանց անտար-
բեր կեցայ . սակայն երբ կը տեսնեմ
որ խաղաղացեալն Երզնկայ կրկին
խառնելու ձեռնարկութիւններ կը-
լոյն հայ մամուլը առաջնորդութեամբ,
ալ ևս չեմ կրնար զսպել համբերու-
թիւնս, և կուգամ ծանուցանել իմ
հայրենակցաց որ զգոյ՛ջ մնան օտար
թելադրութենէ . բաւական է ինչ
որ ըրին մինչև ցարդ և անգին ժա-
մանակ վատնեցին . դպրոցաց հոգ տա-
նելու, ժողովականները լաւ կռու-
քներու, դատելու, և ապա քուէ-
արկելու ժամանակ է : Գանի մը սին-
լըքորներու ձեռք խաղալիք պէտք
չէ ըլլան :

Մեր իբր մեր հայրենեաց հարա-
դատ դաւակը այս կէտերն ձեր
դատողութեան կը յանձնեմք, որք
էական կէտերն են Նիքէ հարկը պա-
հանջէ, չի պիտի դանդաղինք դարձ-
եալ գրելու :

Մ. Պօլիս և հոկտ. 1876
Թ. Յ. Բենիքեան

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Նոր հաստատուի երեսփոխանա-
կան ժողովին և Երեսփոխան կազմու-
թեան մասին հետեւեալ տեղեկու-
թիւնները կը կարգաւք Պատրիարքի
մէջ :

Երեսփոխանաց ժողովը (Մէճլիսը
Մէսպուսն) հարիւր քսան անդամէ
պիտի բաղկանայ, բոլորն ալ ժողո-
վրդական ընտրութեամբ . Աւագաց
կամ երեւելեաց ժողովը (Մէճլիսը
Այան) երեսուն կամ վաթսուէ ան-
գամ պիտի ունենայ, կառավարու-
թիւնէն ընտրուած . Երեսփոխանաց
ժողովն ամեն տարի դեկտեմբերի
սկիզբը պիտի բացուի և մինչև փե-
արկաբար վերջը՝ այսինքն երեք ա-
միս՝ նիստ պիտի ընէ, ելից և մտից
հաշուեկիւռն և օրէնքներ պիտի ու-
րոշէ և հաստատէ : Իսկ երեք ամէն
աւելի երկարաձեռն կայսերական
հրամանաւ (իրատէ) պիտի ըլլայ :
Աւագաց ժողովոյն պաշտօնը պիտի
ըլլայ երեսփոխանաց ժողովոյն որո-
շած օրէնքները վերաքննել, վաւե-
րացնել, կամ եթէ բարեփոխութեան
պէտք տեսնէ՝ անոր վերադարձնել :
Երեսփոխանաց ժողովոյն անդամներն
երեք տարին անգամ մը բոլորովին
պիտի վերանորոգին, ամեն մէկ եր-
րորդ մասը փոխուելով : Մինչև որ

ընտրութեանց կանոնները հաստատ-
ուին, ժամանակ չանցնելու համար,
երեսփոխանք միայն՝ այս տարի՝ ար-
դէն ժողովրդեան կողմէն ընտրեալ
գաւառաց վարչական ժողովներուն
(Իտարէ մէճլիսի) անդամներէն պի-
տի ընտրուին :

Երեսփոխան ըլլալու յատկութիւն-
ներն են՝ բնաւ եղբունական դատա-
պարտութիւն կրած չըլլալ, այսինքն
քաղաքային իրաւունքէ զրկուած
չըլլալ, քսան և հինգ տարին լրացու-
ցած ըլլալ, և կալուած ունենալ :
Տէրութեան պաշտօնի մէջ գտնուող
անձինք երբ երեսփոխան ընտրուին,
հրատարական պիտի տան իրենց
պաշտօնէն, որպէս զի ժողովրդէն
իրենց յանձնուած երեսփոխանութիւ-
նը կատարեն : Երեսփոխանք մաս-
նաւոր գաւառի կամ ժողովրդեան
մասնաւոր գասու մը երեսփոխան
չպիտի համարուին, այլ բոլոր ժողո-
վրդեան : Գաւառական երեսփոխա-
նաց ընտրութեան համար՝ ամեն Գա-
ղաներու և Սանճաղներու վարչա-
կան ժողովոց անդամները պիտի դու-
մարին, և իրենցմէ խնդրուած իսլամ
և ոչ իսլամ երեսփոխանաց անուններ
ըր քուէթուղթիւն վրայ պիտի գրեն,
որոյ ներքև իրենց ստորագրութիւնը
պիտի դնեն : Այս ընտրութեանց՝
կառավարութեան պաշտօնատարք
միջամտելու իրաւունք չը պիտի ու-
նենան : Գուէթուղթիւնը Գայմազամ
ներուն կողմէն Մուխասարքինե-
րուն, և ատոնցմէ ալ վալիին պիտի
զրկուին, որ իւր նախագահութեան
ներքև, և վարչական ժողովոյ որոշ-
մամբ, խառն մասնախորհուրդ մը
պիտի կազմէ քուէթուղթիւնը քննե-
լու համար : Հաւասար քուէ ստա-
ցողներու համար վիճակ պիտի ձգուի
՚Բուէթուղթիւնը կեդրոնական կա-
ռավարութեան պիտի ծանուցուի :

Երեսփոխանական ժողովը գեկտ.
Կին պիտի բացուի . երեսփոխանք
յատուկ հրաւերով պիտի գան, և
քուէթուղթիւնը քննող մասնախոր-
հուրդէն իրենց ձեռքը Մաղպաթա
մը պիտի տրուի :

Իսկ մայրաքաղաքիս մէջ ընտրու-
թիւններն հետեւեալ կերպիւ պիտի
ըլլան : Կ. Պօլս քսան չըլանակներու
պիտի բաժնուի, որոց իւրաքանչիւրէն
երկու երեսփոխան պիտի խնդրուի :
Ընտրութիւնը կալուածատէրք պիտի
կատարեն, բայց ոչ ուղղակի, այլ
ամեն մէկ ընտրող երկու փոխանորդ
պիտի կարգէ, և այս փոխանորդ-
ներն հաւաքուելով երեսփոխանները
պիտի ընտրեն : Մայրաքաղաքիս
ընտրութեանց արդէնքը ոստիկա-
նութեան նախարարին միջոցաւ Պե-
տական խորհրդոյ պիտի ներկայա-
նայ, որ քուէները քննելով ընտրու-
թիւնները պիտի հրատարակէ և ե-
րեսփոխանաց վկայագիր պիտի տայ :

Երեսփոխանք հաստուցում մը պի-
տի առնուն օրականի հաշուով . դա-
ւառական երեսփոխանաց ալ ճանա-
պարհի ծախք պիտի վճարուի : Երբ
երեսփոխանաց երկու երրորդ մասը
ներկայ գտնուի, ժողովը պիտի
բացուի :

Բ. Գուաը Սերվիոյ և Գարա-
տաղի պատերազմին նկատմամբ հինգ-
ամեայ զինագաղար որոշելով հե-
տեւեալ պայմաններով կը կնքէ .
1. Սոյն զինագաղարի միջոցին ա-
մէն արտաքին օժանդակութիւնք
Սերվիայէն կըտրին :

2. Նոյնպէս հինգ ամսուան միջո-
ցին մէջ Սերվիո և Գարատաղ Հէր-
սէրի և Պօսնիոյ օգնութիւն ընելէ
դադարին :

Լէվընթ Հէրալտ կըսէ թէ Անգ-
ղիա ընդունելու է հինգամեայ զինա-
դադարը և թէ Աւստրիա ալ անոր
օրինակին հետեւեր է :

— Վիեննայի Մէսսսէ լրագրին
հրատարակութենէն կը տեղեկացուի
թէ մայրաքաղաքիս Ռուսական դեու-
պան իննամիջով զօրապետը Կ. Պօլս
գալու համար Գրքմէն շոգենաւով
ճամբայ ելած ըլլալով, յանկարծ կէս
ճամբէն Լիվատիա կանչուեր է . որ-
պէս զի գահաժառանգ կայսրորդոյն
և վիեննայէն վերադարձող Մուամ-
րաքօփ զօրավարին Լիվատիա հասած
ժամանակ հոն գտնուի : Յիշեալ լրա-
գիրը կը ծանուցանէ թէ Աղէքսանդր
կայսրը ծանրապէս հիւանդանալով,
գահաժառանգ որդին հեռագրով
Լիվատիա կանչեր է :

Անշուշտ թիչ օրէն կարևոր լուրեր
կառնունք :

— Պրէզիդիոյ կայսրը և կայսրու-
հին Բերայի սիլվոսոյ յոյն ընկերու-
թեան նիստին ներկայ գտնուեցան
հինգշաբթի օր, որոյ անդամներ ե-
ղեր ի բազմոց հետէ : Ուրաղթ իրի-
կուն ալ Չուխաճեանի առաջնորդու-
թեամբ տրուած « Լէպլէպլիսի հօր
հօր աղա » անուն տաճիկերէն օփէ-
րային ներկայացման գտնուեցան :
Շարաթ օր ալ Աւստրիական Լոյտի
շոգենաւով Չանագ-Պայէ մեկնեցան
Աթէնք երթալու համար, ուրկէ
Չմիւրնիա, Աստրեստան, Երուսա-
ղէմ և ապա Եգիպտոս պիտի եր-
թան :

— Սիւուճաէն Տէրվիլ զիշայի
կողմանէ 10 հոկտ. թուով սպարա-
պետի դուռը զարնուած հեռագիր
մը կը ծանուցանէ թէ հոկտ. 9 ին
կուռ մը եղեր է Օսմ. զօրաց և Գա-
րատաղուց մէջ . սոյն կուռոյն մէջ
Օսմ. զօրքերը թշնամոյն Տ ապառա-
ժուտ բուրները գրաւեր և Գարա-
տաղիք ահագին կորուստով փա-
խեր են : Մուպտաֆա ճէլալէտտին
փաշա զօրքերը յարձակման տանե-
լու ատեն վիրավորուեր է : Հեռա-
գիրը կըսէ թէ Օսմ. զօրաց այս կուռ-
ոյն մէջ ցուցեցած քաջութիւնը ան-
համեմատ դուրիւ է :

— Փարիզէն քաջուած հեռագիր
մ'ալ կը ծանուցանէ թէ Աղէքսանդր
կայսրը Ռուսիոյ դաճը իր գահաժա-
ռանգ որդւոյն դիտի յանձնէ :

— Միջերկրական ծովը գտնուած
չորս զրահաւոր շոգենաւները ուր-
բայթ իրիկուն և շարաթ առաւօտ
մայրաքաղաքս վերադարձան Սև
ծով երթալու համար :

— Ռուսիոյ պատերազմական գոր-
ծոց պաշտօնեան Կև ծովու բերդե-
րը աչքէ անցնելու ելեր է :

— Թրիէսթի թղթատարով եկած
յունական լրագիրք կը ծանուցանեն
թէ զինուորական պատրաստութիւնք
մեծ փութով առաջ կը տարուին
բոլոր Յունաստանի մէջ : Մեծամեծ
հանգանակութիւններ բացուեր և
մեծ դուրսը մը հաւաքուեր է : Մար-
սիլոյ մէջ ղէնք խրկելու համար
մասնաժողով մը կազմուեր է ընդ նա-
խագահութեամբ երկու յոյն վաճա-
ռականաց : Միսօրնիլի, խալիքիսի, փի-
րէի և Յունաստանի միւս քաղաքաց
մէջ մըթիւնկներ գումարուեր են : Ա-
թէնք հաստատեալ մասնաժողով մը

